Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ «Ֆաստ Գլոբալ Սոլուշնս» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ վարչապետի աշխատակազմի՝ թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-25/3-1» պայմանագրի 05.09.2024 թվականի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին անհիմն է և ենթակա է մերժման:

6. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանն արձանագրում է, որ սույն գործով Հայցվոր կողմից նախապես վճարվել է հայցադիմումի ներկայացման համար անհրաժեշտ պետական տուրքի գումարն, իսկ հայցը մերժվում է, ուստի Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Ֆաստ Գլոբալ Սոլուշնս» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ վարչապետի աշխատակազմի՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am